ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.2/16493-2026

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (Կ-1294-27.03.2026-ՊԻ-011/1) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները, լրամշակված նախագծերը, ամփոփաթերթը, ինչպես նաև նախագծերում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկանքները՝ գլխադասային հանձնաժողովում քննարկելու համար:

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ՝

1. Նախագծի վերնագրում «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ» բառն առաջարկում ենք փոխարինել «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ» բառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, այն է. «Նորմատիվ իրավական ակտը ունենում է վերնագիր, որը համապատասխանում է նորմատիվ իրավական ակտի բովանդակությանը»: Այսպես՝ Նախագծի 1-ին հոդվածի 1-ին կետով նախատեսվում է կատարել փոփոխություն, 4-րդ կետով՝ դրույթը ուժը կորցրած ճանաչել, իսկ 5-րդ կետով՝ դրույթից հանել բառ, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերի համաձայն, վերոգրյալ բոլոր գործողությունները համարվում են նորմատիվ ակտում փոփոխություն կատարելու տարբեր դրսևորումներ, ինչից բխում է, որ Նախագծով կատարվում են մի քանի փոփոխություններ, հետևաբար Նախագծի վերնագիրը պետք է արտացոլի դա:

«Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ՝

1. Առաջարկում ենք վերացնել Նախագծի 2-րդ հոդվածում առկա տեխնիկական վրիպակները: Մասնավորապես, Նախագծի 2-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված է.

«Օրենսգրքի 133-րդ հոդվածում (...) 3) 5-8-րդ կետերով «Քրեակատարողական և Պրոբացիայի ծառայությունների» բառերը փոխարինել «Քրեակատարողական հիմնարկի և Պրոբացիայի ծառայության» բառերով:»:

Հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ կետը՝ առաջարկում ենք քննարկվող նորմում «5-8-րդ կետերով» ձևակերպումը փոխարինել «5-րդ և 8-րդ մասերում» ձևակերպմամբ՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ հղումը վերաբերում է Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքի 133-րդ հոդվածի միայն 5-րդ և 8-րդ մասերին, այլ ոչ թե կետերին:

Վերոգրյալի հիման վրա, նկատի ունենալով, որ «Քրեակատարողական և Պրոբացիայի ծառայությունների» բառեր առկա են միայն Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքի 133-րդ հոդվածի 5-րդ և 8-րդ մասերում, իսկ նույն հոդվածի 6-րդ և 7-րդ մասերում առկա են «Քրեակատարողական կամ Պրոբացիայի ծառայությունների» բառեր առաջարկում ենք Նախագծի 2-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ կետով.

«4) 6-րդ և 7-րդ մասերում «Քրեակատարողական կամ Պրոբացիայի ծառայությունների» բառերը փոխարինել «Քրեակատարողական հիմնարկի կամ Պրոբացիայի ծառայության» բառերով:»:

2. Նախագծի 3-րդ հոդվածում առկա են երկու 2-րդ կետեր, առաջարկում ենք շտկել այդ վրիպակը:

3. Հաշվի առնելով, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Նորմատիվ իրավական ակտն ընդունելու իրավասություն ունեցող մարմինը պարտավոր է նախատեսել նորմատիվ իրավական ակտի ուժի մեջ մտնելու ավելի ուշ ողջամիտ ժամկետ (...) եթե ակտով սահմանվում են այնպիսի իրավակարգավորումներ, որոնց համար անհրաժեշտ է հիմնավոր ժամանակահատված, որը հնարավորություն կտա հասցեատիրոջը իր վարքագիծը համապատասխանեցնելու սահմանված պահանջներին»՝ առաջարկում ենք որպես օրենքն ուժի մեջ մտնելու ժամկետ սահմանել 2026 թվականի սեպտեմբերի 1-ը:

Հարգանքով՝

/ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ